Մեծ մասը փախչում են դէպի աջ։

ՁԱՅՆԵՐ.– (Աջից) Գա՛լիս է, գալի՛ս է…

Շփոթութիւն։ Մի մասը փախչում է դէպի ձախ, միւսը՝ աջ, երրորդը՝ դիմացի կողմը։

ՆԱԶԱՐ.– Բը՛, բը՛, բը՛… (Փախչում է դէպի դիմացի կողմը։)

ԴԻՄԱՑ ՓԱԽՉՈՂՆԵՐ.– (ետ վազելով) էս կողմից է գալիս։

ՆԱԶԱՐ.– (Ետ է փախչում դէպի աջ) Բը՛, բը՛, բը՛…

ԱՋԻՑ ՓԱԽՉՈՂՆԵՐ.– (Ետ վազելով) էս կողմից է գալիս,

ՆԱԶԱՐ.– (Ետ է փախչում դէպի ձախ) բը՛, բը՛, բը՛… (Դուրս է վազում, բոլորն ընկնում են Նազարի հետեւից։ Նազարը ներս է ընկնում դէմից, վազում դէպի աջ եւ ապա դուրս վազելով՝ ներս է մտնում դէմից։)

ՁԱՅՆԵՐ.– Եկա՛ւ, եկա՛ւ…

ԹԱՄԱԴԱ.– Նազարին առաջ գցեցէք։ Նազարին առաջ գցեցէք։ (Բոլորը թաքնւում են Նազարի թիկունքում)։

ՎԱԳՐԸ.– (Երեւում է աջից։ Նազարին հրում են վագրի վրայ, եւ իրենք փախչում են դէպի ձախ։ Նազարը սարսափից եւ շփոթութիւնից մնում է տեղում սառած։ Ապա հանկարծ մագլցում է ծառի վրայ։ Վագրը գալիս է մտնում նոյն ծառի տակ եւ կանգնում թփերի մէջ։)

ՁԱՅՆԵՐ.– (Հեռուից) Փախէ՛ք, փախէ՛ք… (Լռութիւն։)

ՆԱԶԱՐ.– (Ծամածուռ ձայնով, սարսափահար) Ամա՜ա՜ն Վագրը կաղկանձում է։ Նազարը սարսափով նայում է վագրին եւ դողում։ Հանկարծ վայր է ընկնում ծառից ուղիղ վագրի մէջքին եւ, սարսափից հեծնելով վրան, պինդ կպչում է գազանի մէջքից։ Վագրը վախենում է եւ, ցատկելով տեղից, սկսում է փախչել՝ Նազարին մէջքին առած։

ԹԱՄԱԴԱ.– (Դիմաց, մուտքի մօտ, դէպի դուրս) Ա՛յ տղա, հասէ՛ք, վագրին բռնե՛լ է, վագրին բռնե՛լ…

ՁԱՅՆԵՐ.– Գալի՛ս ենք, գա՛լիս…

ԹԱՄԱԴԱ.– (Դեպի ձախ) Պի՛նդ բռնի, Քաջ Նազար, պինդ բռնի։ (Գիւղացիներին՝ դէպի աջ) Հասե՛ք, զարկե՛ք։ Վագրը ներս է մտնում ձախից՝ Նազարը վրան։ Գիւղացիք հետեւում են վագրին թահերով, փայտերով ու քարերով. շրջապատում են վագրին եւ ամեն կողմից հարուածելով սպանում են նրան։ Նազարը սարսափից իրեն կորցրած դեռ նստած է վագրի մէջքին։ Լռութիւն։

ՄԻ ՁԱՅՆ.– Ուշքը վրան չի։

ՈՒՐԻՇ ՁԱՅՆ.– Սո՛ւս կացէք… Թունդ է չարացած։